

Այլուստ ծանօթ է որ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովը կաթողիկէ կը նկատէր Յակոբ Զուգայեցին: 1663 Յունուար 23ին Հելիոպոլսոյ տիտղոսաւոր Եպիսկոպոսը ճամբորդութեան մը պահուն էջմիածնէն կը գրէր՝ թէ կաթողիկէ նկատուած է Հայոց Պատրիարքը, որովհետեւ ա) շատեր զինք կաթողիկէ կը ճանչնան. բ) ան իր կաթողիկէ դաւանանքին մասին խօսած է Գերպօ. Բիրոմալլիի հետ. գ) նամակ մը գրած է Ս. Քահանայապետին, զայն ճանչնալով իբրեւ Ընդհանրական Եկեղեցւոյ Պետը. դ) ուզած է ջնջել սովորութիւնը նոյնու Մեծն Ս. Լեւոնը. ե) կը խորհի Հոռոմ երթալ Ս. Պապին տեսութեան (11): Սակայն ինք Հելիոպոլսոյ Եպիսկոպոսը կը տարակուսէր անոր կաթողիկէութեան մասին, վասընզի Կաթողիկոսն իրեն չէր յայտնած իր կաթողիկէութիւնը, չէր ուզած հաւատքի շուրջ խօսիլ թարգմանի միջոցաւ, եւ իր քարտուղարն էր Ստեփան Եպիսկոպոս Վարդանովիչ, որ, ըստ իրեն, հերետիկոսական գաղափարներ կը պաշտպանէր (12): Հելիոպոլսոյ Եպիսկոպոսը այսպէս կը խորհէր, որովհետեւ կ'անդիտանար՝ թէ ո՛րչափ շըր-

(11) Archivio della S.C.P.F., Acta vol. 32, fol. 6v sq. nell' Orientalia Christiana Analecta 135, Sac. Gregorio Petrowicz. L'Unione degli Armeni di Polonia con la Santa Sede, Roma, 1950, pp. 197-198.

(12) Անդ: